

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 . . Ֆր.
Վեցամսեայ 6 . .

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 . .

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյս
Վեցամսեայ 1.50 . .

ԿԱՆԻՍԻԿ

Մանուկնս տողը
20 տակիւ



ՊԱՄԻՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԻ

Rédaction du journal

"Иривоуик"

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

"Иривуик"

ВАРНА

Գրոշիւնք եւ չին
տրոշիր

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ մեր յար-
գոյ բաժանորդներէն որ հաճին իրենց
բաժանակիւնները դրել ընդ փոյթ :

Անցեալ տարուէն չ'պարտք ունե-
ցողներուն շանունները պիտի հրատա-
րակենք՝ եւ թերթերուն առաքուի
պիտի դադարեցնենք :

Կ Ո Չ

«ՀԱՅ. ՅԵՂ. ՄԻՈՒԹԵԱՆ»

Մ Ռ

ՀԱՅ ԺՈՂՈՎ ՈՒՐԴՆ

Հայեր

Հայրենակիցներ

Հայ Յեղափոխական Միութիւնս
կազմուած է երեք տարիներէ ի վեր ,
իրեն անմիջական նպատակ ունենալով
օսման հան լսման լսողութեան լուծին
տակ դարձել ի վեր ճիշտաւ Մայր Հայ-
րենիքի Ազատութեան համար հայ
Ազգին մէջ զոյգութիւն ունեցող եւ
զորոքող բոլոր հայ յեղափոխական ու մե-
րու միացումը : Այլ չ'առաջ ունենա-
լով այն ծանր , դժուարին եւ խիստ
քրթիքական դրութիւնը՝ ոյուն են-
թարկուած է մանաւանդ այս վեր-
ջին տարիներս հայութիւնը իւր բո-
լոր մասերով , հայրենիքի մէջ ինչպէս
նաեւ անկէ , դուրս գաղթալայրերու
մէջ : աշխատանք ունենալով միւս
կողմէ ազգին այս ճակատագրական
բոլորին , գոյութեան կամ չգոյութեան
այս տագնապալի վայրկեանին , դար-
ման տանելու յանձնառութիւնը ու կո-
չումը ունեցող միայն հայ Յեղափոխա-
կան կազմակերպութեան զբաղման
իր արժանի բարձրութեան շատ հե-
ռու լինելը , Միութիւնս իրեն որդա-
զան պաշտականութիւն համարեց ներ-
կայ կոչը ուղղել ընդհանուր հայ ժո-
ղովուրդին եւ նրա իրեն անոր լուրջ
ուշադրութիւնը այն կացութեան վը-
րայ , որուն մէջ կը գտնուի այս վայր-
կեանիս հայ Յեղափոխութիւնը :

Ամենքիդ յայտնի է որ Մայր Հայ-
րենիքը , մեր ամենուս պաշտելի Հա-
յաստանը տակաւին կը գտնուի լուծի
տակ : Օսմանեան սանձարձակ բռնա-
պետութիւնը , առաջ ինչպէս եւ այժմ ,
եւ այժմ աւելի քան թէ առաջ ին-
կած է կապար ծանրութեամբ հայ ժո-
ղովուրդի առանց այն ալ տկար կուրծ-
քի վրայ , Այնպիսով այն հանգաման-
քին որ անոր լուծնուր վրայ Ազատու-
թեան աւետարտ Յեղափոխական դրո-

շը կը ծածանի տասնեւհինգ տարիներէ
ի վեր որ յանուն մեր այդ թանկագին
Ազատութեան արեւան դետեր
վազեցին անոր վրայէն , անթիւ եւ ան-
համար հայկական զոհեր նուիրուե-
ցան եւ որ դեռ մինչև այս րոպէն
մեր այդ պաշտելի բնակավայրը , ամեն
ժամ կը խոցողութի կարեւորութիւն
տանջուի , կը խոչանդուի բռնապե-
տի զզուելի կամքի տակ , սակայն եւ
այդպէս մեր գաղափարը , մեր խոսքը
տակաւին չէ իրադրութեամբ , Մայր Հայ-
րենիքը չէ ազատուած : Նա կը շարու-
նակէ միայն տակաւին գերութեան մէջ
կապուած կաշկանդուած ստրկական
անարգ շղթաներու մէջ :

Ամենուր յայտնի է նաեւ որ Մայր
Հայրենիքէ դուրս գտնուող բազմա-
թիւ մեծ ու պզտիկ հայ գաղթական-
ութեանց վիճակը նոյնպէս չ'ենք կայ-
ցունել որ մի առանձին միութեան
երեսով : Իսրայելու բռնութեան , ա-
մենուրեք անարդարութեան , կեանքի
ու ինչքի անապահովութեան եւ ամեն
տեսակ փրկութեան անհասկանալի ու
բարոյական զրկանքներու եւ հալա-
ծանքներու երեսէն , Մայր-Հայրենի-
քին սրանք փախստական գնացած ,
վտարուած ու հեռացած եւ օտար յար-
կերու տակ ապաւին ու ապաստան
փնտրած այդ հայկական համայնութեան
ներքէ մշտապէս կը գտնուին ազգայնա-
պէս ճակատագրական անխուսափելի
կորստեան վտանգի մէջ :

Կհաստատնի , Մուսուլաւաքիայի ,
Թուրքիայի հայկական ճիւղերու
անդառնալի կորուստը պատմական
որքան զառն եւ սխալ նոյնքան եւ
անհերքելի ապացոյց է այդ իրողու-
թեան :

Ռուսիոյ մէջ նաեւ դպրոցներու եւ
ապա հայկական եկեղեցւոյն հասած
պետական հարուածը դեռ երկուսն
պատմական փաստն է : Այդ ցոյց կու-
տայ թէ այնտեղ , ինչպէս եւ Մայր
Հայրենիքի մէջ , ինչպէս նաեւ , աւելի
կամ նուազ համամատութեամբ , ա-
մեն անգ , ամէն կէտի վրայ , Ազգու-
թեան ցնձուած է իւր գոյութեան
հիմքերէն եւ որ այդ գոյութեան այ-
ժմ քան ուրիշ որեւէ ժամանակ անց-
եալի պատմութեան մէջ ինկած է
կասկածի տակ եւ որ նա , այդ գո-
յութեան կիւրծի առանց չ'ափազանցու-
թեան , այսօրուան կամ վաղուան ին-
չիւր դարձած . . .

Ահա՛ մօտաւորապէս Ազգութեան
արտաքին ընդհանուր կացութիւնը ,
եւ այս զերգոյն վաւերին հանդէպ
երբ մեր ամենուս աչքերը պէտքէ սե-
ւեռնին , պէտք է հանդէպին , որպէս
միակ յուսոյ հաւատքի եւ վրկութեան
ապաւինելին , այն հաստատութեան
վրայ , որ հայկական Յեղափոխական

մարմինն է , ինչ կը տեսնանք այնտեղ :
Այնտեղ գրեթէ բացարձակապէս ու-
րիշ բան չ'ենք տեսնել տարիներէ ի-
վեր , լայն կիւն փոխադարձ ատելու-
թեան եւ փոխադարձ ներքին անհաշտ
թշնամութեան : Ամեն անգ , ամեն կէ-
տի վրայ , ներքին անվերջ կռիւներն
ու երկպառակութիւնները աւելն ժա-
մանակի աւելի սաս յոռեաւր եւ ուժ-
գնուեաւր կը շարունակեն իրենց
խնդրոյ ծրար դիրք :

Բաժնուած առանձին , ինքնուրոյն
անշատ , միմեանց հետ ոչ մի ներքին
կապ չ'ունեցող բանակներու որոնք կը
մղեն միմեանց դէմ մահու եւ կենաց ա-
նողորմ կռիւ , Յեղափոխական մարմինը
անվերջ միօրինակ պայտայ կուտայ ին-
քն իւր վրայ , ինքն իւր ձեռքով ջլա-
տելով խորտակելով , ոչնչացնելով
իւր սեփական ուժերը եւ միայն մշ-
տապէս անզոր ընդհանուր թշնամուն
դէմ : Կուսակցական մոլեռանդ ոգով
կուրացած՝ չ'ի խնայել նոյն իսկ իւր
հարգաւոր հայ եղբոր , եւ յեղափոխա-
կան սուրբ , փրկելով շատ անգամ իւր
նպատակ իւր ուղղութիւնը կը խրուի
յիմարաբար ազգակցի , արեւակցի
սիրտը , փոխանակ թշնամու սրտին . . .

Չկայ միութիւն որոնք մեզ մէջ ,
չկայ միութիւն որոնք մեզ մէջ ,
չկայ միութիւն զորոնք մեզ մէջ ,
չկայ միութիւն զորոնք մեզ մէջ ,
չկայ միութիւն միմեանց միմեանց
մէջ : չկայ միութիւն միմեանց իսկ նպատակ-
ներու , ձգտումներու մէջ : Ինչ
չու այս բոլորը : Միայն եւ միայն ա-
նոր համար որ անոնցմէ ամեն մէկը
անպայման կուզէ ազատ ըլլալ իրեն
սիրելի , իրեն պաշտելի իրեն նախըն-
տրելի համարած եւ միմեանց ընդհանուր
որպէս անփոփոխելի որպէս անզրկան
իւր որպէս անվերջելի հաւատոյ հա-
գանակ իրեն ինքնորոշաբար կազմած
կուսակցական ծրարի գործադրութեան
մէջ :

Այ՛ո , այս , բոլորը միայն անոր հա-
մար որ անոնք կուզեն անպայման բա-
բաւականութիւն տուած ըլլալ իրենց
կուսակցական առաւելութիւններուն
իրենց կուսակցական զգացումներուն
ու մտածումներուն , իրենց կուսակ-
ցական եւրո , ոգուն ու միմեանց իսկ
շատ անգամ կուսակցական կրքերուն
առանց մի վայրկեան մտքէ անցնելու
որ Հայրենիքը , որու անունով եւ ո-
րու համար միայն եւ նաեւ եւ առաջ
անոնք կազմուած , կազմակերպուած եւ
ներկայացած են ընդհանուր հայ ժողո-
վրդին , օտար է միայնամայն կուսակ-
ցական վիճակու կուսակցական երկ-
պառակութիւններու , կուսակցական
ինչ որ անվերջելի , միմեանց հետ
անհաշտ սկզբունքներու ու առաւելու-
թիւններու , առանց մի վայրկեան մո-
քէ անցնելու որ Հայրենիքը , որ ա-

նոնց բոլորին համար մէկ է եւ մեկ-
նոյն , ոչ մի տարբերութիւն , ոչ մի
խտրութիւն չէ կարող դնել անոնց մէջ
եւ որ նա բոլորովին հաւասարապէս ,
բոլորովին միակերպ կը դիմէ՝ միա-
ցած ուժերով . համեմատութեամբ ,
առանց կուսակցական , անձնական
կամ եսական յետին մտքերու , ա-
ռանց ստոր կրքերու , զնուծ , նեղ
ճղճիմ հաշիւներու , մղել ընդհանուր
թշնամու դէմ այն կռիւը , որու հա-
մար անոնք կազմակերպուած են ամեկ-
քն ալ եւ որու յաջողութեամբ պա-
կուրդը պէտք է տայ անոր Հայրենի-
քին այն ազատութիւնը՝ որուն սա ար-
ժանի է միայնամայն եւ որուն սա կը
ձգտի , որուն սա օր առաջ պէտք ունի
համեմու :

Կուսակցական անմիտ հաշիւներ կուսակ-
ցական անբովանդակ եւ միայնակ
նախապատուութիւններ ան յեղափոխա-
կան կուսակցութիւններու անմիտութե-
ան եւ անվերջ կռիւներու ու վիճե-
րու պատճառները . ահա եւ այն սխալ
մտայն , անհասկանալի պատկերը , որ
կը ներկայացնէ անոնց Յեղափոխական
մարմինը , Մի գրութիւն՝ որը ինքն
ստեղծել եւ որ մեզ ոչ մի կերպով
օգտակար չը լինելէ զատ՝ կը դառ-
նայ ամբողջապէս յօգուտ ի նպատակ
մեր ամենուս թշնամուն . . .


Հայրենակիցներ , Հ. Յ. Միու-
թիւնս ուղղելով ձեզ ներկայ կոչը ,
ամենեւին նպատակ չ'ունի երկար կանգ
առնելու այն սկզբունքներու ու գա-
ղափարներու վրայ , որոնք պատճառ
դարձած են Յեղափոխական մարմինը
բաժնելու , կտոր կտոր ընկու . . .
ոչ ,
այդ կըլլայ անոր կողմէ միագամայն
անտեղի ներկայ պարագայի : Բայց
այն չէ կարող մասնաւոր չ'ընել եւ ձեռ
չուրջ ուշադրութեանը չը յանձնել մի
կէտ , որ ներկայ ծանր , որոնք մէջ կը
դառնուի Ազգն ու Հայրենիքը , կը
սպաւնայ , ի միջի այլ մտահոգութիւն-
ներու , դառնալ ամենավտանգաւոր մի
տարր , որ կարող է , որ ընդունակ է ,
եթէ ոչ վիճել տալու բոլորովին , գո-
նէ ամենամեծ չափերով դժուարացնե-
լու , նոյն իսկ վտանգելու Մայր-Հայ-
րենիքի ազատութեան գործը : Այդ՝
տարիներէ ի վեր Հայրենիքի Ազատու-
թեան գաղափարին հետ դուրսեւթա-
բար քարոզուած բայց միշտ գուտ գա-
ղափարային տեսական վիճակի մէջ
մնացած սօսիալիստական հոսանքն է ,
որ , վերջին երկու երեք տարիներս ,
դուրս գալով իր գաղափարային ծա-
ծուկ վիճակէն եւ որոշ կափով հող
գտնելով մասնաւորապէս կովկասեան
Հայկական կեանքի մէջ , ազակցու-
թեամբ մանաւանդ օտարազգի տար-
րերու , հետզհետեւ աւելի ու աւելի

Իմանախոյ որ թաղական խոր՝

հրդույն ընտրութեան առթիւ տեղ-
ւոյս ազգայինք մտադրած են զիս
թաղ խորհրդոյ անդամ ընտրելու
ներկայիս խորին շնորհակալու-
թիւն յայտնելով մեծարգոյ ազ-
գայնացս կողմէն հրապարակաւ ի-
մացնել որ անձնական տկարու-
թեանս պատճառաւ չ'պիտի կա-
րողանամ ընդունել այդ պաշտո-
նը :

Մ. ՍԻՒԲԻԱՍԵԱՆ

Ք Ո Է Լ Ս Ի Կ Ո Ի Թ Ի Ի Ն



Տեղւոյս հրաժարեալ թաղ-
խորհրդոյ տեղ նորին ընտրու-
թիւնը վերջին անգամ որոշեալ
օրին չկարենալով տեղի ունենալ
ժողովոյ կողմանէ յետաձգուած
էր ուրիշ օրուան : Հետեւեալ
իւր վերջին որոշման համեմատ
ընտրութիւնը տեղի պիտի ունե-
նայ 29 փետրուարին տեղւոյս
Ազգ. վարժարանին մէջ : Քուէ-
ներու ընդունելութիւնը սկսուե-
լով առաւօտեան ժամը 8 ին պի-
տի վերջանայ ժամը 2 ին կէս
օրէն վերջը, և անմիջապէս քուէ-
համարը պիտի կատարուի :

Ձայս ի գիտութիւն հազարե-
լով, ժողովս պատիւ ունի հրո-
ւիրել Ձեզ կատարելու համար
սոյն ընտրութեան մէջ Ձեր ազ-
գային պարտականութեանը, և
միանգամայն խնդրել ի Ձեռն որ
անձամբ յանձնէք ժողովոյս Ձեր
քուէն : Տպագրեալ քուէ չպիտի
ընդունուի :


Ի Դիմաց Ընտրողական Ժողովոյ
Մարտիրոս Դեյն . Մարտիրոսեան
23 փետր. 904

Վառնա

Ծանօթ . Խմբ. — Հակառակ այլ
ընդ. այլոյ ասարձայնութեանց,

քուէարկելու իրաւունք ունի տե-
ղացի ու գաղթական ամէն հայ
որ 25 տարեկանէ պակաս չէ
ու քաղաքական և ազգային իրա-
ւունք կը վայելէ :

ՀԱՅ ԶՈՂ ՄԸ ՆԻ ԽԱՐԷՈՒԹԻՒՆ



Անցեալ ամառ Մակեդոնացւոյ
ապստամբութեան առիթն՝ Վառ-
նայի հայ գաղթականներէն խո-
հարար պ. Կարապետի Արմենակ
անունով որդին խուճիւր մը խառ-
նուելով կռուի գայած էր. բայց
դժբաղդաբար քիչ ժամանակ յե-
տոյ անոր վարնուած ու մեռած
ըլլալու ստոյգ լուրը հասաւ ի մեծ
վիշտ իր հօր, Այդ վշտաբեկ հայ-
ընտանիք մեզ գիմելով խնդրեց
երկատողով մը ժամուցանել Հայ
հասարակութեան թէ՛ չը խառ-
ուին կարգ մը անձանց Մակե-
դոնացիներէ, ուրոնք հայ վա-
ճառատուներ մ'առնելով այդ հայ
զահին անունով, կամ զանի տե-
սած ու վերագրածուցած ըլլալու
սուտերով, գրամ և նուէրներ կը
կորզեն անկէ ասկէ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Տեղւոյս Ազգ. երկ. վարժարանաց ի
նպատակ ձեռնարկուած վիճակահանու-
թիւնը կամքէ անկախ պատճառներով
ժամանակ մը եւս ստիպուած ենք յե-
տաձգել :

Հակառակ մեր թախանձագին դի-
մումներուն կը ցաւինք յայտնել որ
քաղաքէս դուրս զրկուած տոմսակ-
ներուն փոխարեք միծ մասամբ
անգանձելի կը մնայ սակաւին :

Սյս հրապարակային յայտարարու-
թիւնէ ետք կը յուսանք որ տոմսակ
ստացող ազգայինները, կամ փոխար-
եքք եւ կամ տոմսերը վերջապէս պիտի

բարեհաճին անյապաղ վերագրաձե-
նել հոգաբարձութեանս :

Ի դիմաց Հոգաբարձութեան
Ազգ. երկսեռ վարժարանաց

18 փետրուար 1904

Սիւիտդի

(Կն)ԻԲ

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Լ. ՉՄԻԱՆԻ Ի Ներքին տաճարին
մէջ պատարագ մատուցուելու և
մաղթանք կատարուելու է պատե-
րապէս առթիւ Ռուսաց բանակին
յաջողութեան համար : ՎԵՏ. Կա-
թողիկոսը շրջաբերականներ ուղ-
ղել է վիճակները սրբապետի կայ-
ութեան բոլոր եկեղեցիներու
մէջ մաղթանք և հոկոմ կատար-
ուին . նաև Ս. Հայրապետը իր և
իր հօտին զոհացումները հեռագ-
րաւ հաղորդել է Ձաւին : (Ի՞նչ
զոհացումներ...)

Ս. Լ. ՉՄԻԱՆԻ Սիւիտդի վերա-
կազմութեան որոշում տրուել է :
Տիգրիսի առաջնորդ Տ. Գեորգ
արքեպ. պաշտօնաւարութիւնը
կալիցիին պաշտօնապէս հաղորդած
ըլլալով՝ ՎԵՏ. Կաթողիկոսը զանի
էջմիածին կոչած է :

Նոր խմբագրութիւնը կանոնագ-
րի համար առ այժմ խօսք չկայ
եղեր, և հրեածին նոր Պրովո-
քորը Ֆրէնկէլ նպատաւոր տրա-
մադրութիւններ կը ցուցնէ ե-
ղեր : Կը լուրի թէ Կովկասի նախ-
կին փոխարքայ Միխայէլ Մեծ
Դուքսին սրբաւոյն՝ Աղեքսանդր
Մեծ Դուքսին նախագահութեամբ
և իշխան Լազարեանցի մասնակ-
ցութեամբ պետական յանձնա-
ժողով մը նոր կարգադրութիւն-
ներ պիտի ընէ հայ եկեղեցական
խնդրոց առթիւ :

Լ. ՉՄԻԱՆԻ խնդրուած է բոլոր
հայ եկեղեցիներու մէջ հաստա-
տուած գանձանակները արդիւնա-
ւորել, վասնոր առ այժմ Մայր
Աթոռոյ Միաբանութեան ապ-
րուստը, Մայր տաճարին պաշ-
տառութիւնը եւ Գեորգեան ճե-
մարանի մատակարարութիւնը
այդ կերպով պիտի հոգացուին :
Կառավարութիւնը իր գրաւած
կալուածներու եւ դրամներու
հասոյթէն ծախքի համար պէտք
եղած գումարը տալ կառավարիչ,
սակայն փոխարէն այնպիսի ըն-
կալագիր կը պահանջէ որ ո՛չ կա-
թողիկոսը, ոչ առաջնորդները
և ոչ վանահայրերը կրնան ոտո-
րագրել : Դրկուած բարեպաշտա-
կան նուէրները այժմ Ս. Հայրա-
պետին ձեռք կը հասնին :

— Պուլկարայոց ծանօթ Հիւր-
միւլեան Գեորգ քահանայն՝ որ
Եգիպտոսի մէջ ալ տարիէ մը
իվել քահանայադոմութենէ
գաղթեցուցուած էր, մեղադրով
մը ներում խնդրած է Կրօն. Ժո-
ղովէն : Ժողովը որոշած է Եգիպ-
տոսէ դուրս պաշտօն մը տալ անոր :

ՊԱՐՍԻՑ ՎԵՏ. Շահը Շիրի-Խուր-
շիտ պատուանշանին առաջին աս-
տիճանը նուիրած է եգիպտաբնակ
Աբրահամ Բարթող փաշայի :

ՍՈՒԼԻՆԱՅԻ ազգայինք Պատ-
րիարքարանէն քահանայ մը ու-
ղած են կրկին :

ԳԵՐԱՍԱՆԱՊԵՏ Մնակեանի մահ-
ուան տխուր լուրին՝ զոր Պոլսոյ
թերթերը հաղորդած էին, սուտ
ըլլալը հաստատուած է : Այդ վա-
ղահաս լուրը Տ. Մնակեանի եղա-
կան առիթ մը ընծայեց իւր ի-
րական մահէն յետոյ իրեն յիշա-
տակին նուիրուելիք ներքաղները
անձամբ կարդալու և լսելու : Այս

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ (10)

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ

(Կաղանդի նորավէպ)

— Իմ հոյակապ գիւնատուռն է, պատասխանեց
Սուլթան Համիտ : Շատ հանճարեղ ու ճիշդ կերպով
պատկերուած է : Իրաւ որ նկարներուդ մէջ է՞ն
հաճոյալին աս է : Անպատճառ կը գնեմ : Կարելի է՞...
Ի՞նչ որ ուզելու ըլլա՞ս՝ կուտամ :

— Ս. . . առիկա անկարելի է : Ես ամէն տեղ
պիտի ցուցնեմ զայն : Նկարներուս ցուցադրու-
թիւնն աւելի չեմ ուզեր : Գիտե՞ս ի՞նչ անագին
գծուարութեամբ զանոնք ձեռք բերած եմ : Ուստի
ազէկ նայէ՛ . . . Հարցումներուս պատասխանը
տո՛ւր : Ես անիւր կը դարձունեմ . . . հեղձնեմ ի-
րարու ետեւէն ներկայացուած դէմքերը մէկիկ մէ-
կիկ զիտէ ու անոնց ո՛վ ըլլաւ ըսէ՛ ինծի : Արդ,
ո՞վ է ան . . .

— Ե՛ս եմ :

— Ի՞նչ կընես :

— Բազմոցիս վրայ կը նստիմ :

— Մեծ դուռնէն ո՞վ եկաւ :

— Ռուսիոյ դեսպանը :

— Անո՞նք :

— Ձերովիէ՞վ :

— Ի՞նչ ներկայացուց քեզի :

— Վերջնապի մը :

— Յետո՞յ :

— Մեկնեցաւ :

— Կարգա՛յ այդ վերջնապիւրը . . . ես ուրուատիպը
կը ցուցնեմ :

— Կեցի՛ր . . . ահա կը կարդամ. «Մակեդոնական
խնդրոյն նկատմամբ Բարձր. Դուռը ծրագրել մը ներ-
կայացունել խոստացած էր երկու ամիս առաջ,
ի՞նչու չը կատարուեցաւ . . . » :

— Ա՛յդ չափ :

— Ա՛յդ չափ :

— Խիտ լա՛ւ. աս ո՞վ է :

— Աւստրիոյ դեսպանը :

— Անո՞նք :

— Ա՛յ, ատոր անունը կը մոռնամ . . . դժուար
է արտասանել :

— Ի՞նչ որ է . ի՞նչ է քեզի տուածը :

— Դարձեալ՝ վերջնապի մը :

— Կարգա՛յ :

— Ահա՛ . . . «Մակեդոնիոյ վիճակը ծանր կերպա-
րանք մը կ'առնէ . . . երկրին անդորրութիւնը մի
միայն մեր կառավարութեան ներկայացուցած ծը-
րագրովը կրնայ ըլլալ . . . եթէ Սուլթանը բարեհաճ
զանդել . . . » :

— Ուրի՞շ :

— Ուրի՛շ բան մը յիշուած չէ՛ :

— Այդ ա՛յ աղէ՛կ. հապա աս ո՞վ է :

— Ո՛ւհ . . . երկու աչքիս լոյսն է . . . ընա՛ւ
չը տեսնեմ՝ աւելի աղէկ է . . .

— Ո՞վ է որ . . .

— Պուլկարիոյ Մատահաթ կիւղարը :

— Անո՞նք :

— Կէչէ՛վ է՛ ի՞նչ է . . .

— Ըսենք թէ Կէչէ՛վ. բայց սուտ գրութիւնն ի՞նչ
է :

— Ումա՛ն, պէ՛ . . . յաւիտեանական երգ մը :

— Ի՞նչ :

— Մտիկ ըրէ՛. «Իշխանապետութիւնը չը կրնար
լուռ մնալ հանդէպ ա՛յն սարսափներուն, որոնց
մատնուած են իր համարիւն եղբայրները՝ Մակե-
դոնիոյ մէջ» :

— Ա՛տ է բոլորը :

— Ատ է :

— Որչա՛փ կարուկ և որչա՛փ վճռական, անանկ
չէ՞ :

— Բայց ո՞ր ականջիս մէջ կը մտնէ, Թո՛ղ բղղայ
որքան որ հոգին կուղէ ես իմ երգս մտիկ կընեմ :

— Հարկա՛ւ . . . թագաւոր ըսածդ աստիկ ըլ-
լալու է :

— Լճեցա՛ւ . . . ուրիշ եկող չը կա՞յ :

— Կայ . . . անուամիկ. ո՞վ է :

— Իմ սրտակից եղբօրս՝ Կիյովնի դեսպանն է :

— Անոր մատուցածն ի՞նչ է :

(ճարտանակելի)

